ՂԱԶԱԽՍՏԱՆ-ԻՐԱՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ՝ ԵԱՏՄ-ԻՐԱՆ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

DOI: 10.52174/2579-2989_2025.1-59

Հիմնաբառեր. *ազատ առևտրի համաձայնագիր, ԵԱՏՄ, Ղազախստան, Իրան, արտահանում, ներմուծում*

Ռուզաննա ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

2014 թ. ավարտել է ՀՊՏՀ-ն և ընդունվել ասպիրանտուրա: 2018 թ.-ից աշխատում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնում: 2018-2020 թթ. սովորել է Texas A&M համալսարանի Ագրոբիզնեսի մագիստրատուրայում: Վերապատրաստվել է աշխարհի տարբեր երկրների համալսարաններում:

https://orcid.org/0000-0003-2226-6435

Հոդվածում ուսումնասիրվել է Ղազախստան-Իրան առևտուրը՝ ԵԱՏՄ-Իրան ժամանակավոր ազատ առևտրի համաձայնագրի ուժի մեջ մտնելուց առաջ և հետո, ինչպես նաև քննարկվել են հնարավոր փոփոխությունները հիմնական ազատ առևտրի համաձայնագրի (ԱԱՀ) ուժի մեջ մտնելուց հետո: Վերլուծությունը ցույց է տալիս, որ ժամանակավոր ԱԱՀ-ից առավելապես օգտվում է Իրանը, քան Ղազախստանը, քանի որ երկկողմ առևտրում վերջինս ունի քիչ դիվերսիֆիկացված (բազմազանեցված) արտահանում, իսկ արտահանվող ապրանքների մեծ մասի համար արտոնյալ մաքսատուրքեր չեն կիրառվում: Արդյունքում 2023 թվականին Ղազախստանն առաջին անգամ Իրանի հետ ունեցել է բացասական առևտրային հաշվեկշիռ, որը հնարավոր է՝ պահպանվի մինչև հիմնական ԱԱՀ ուժի մեջ մտնելը: Այնուամենայնիվ, հիմնական համաձայնագրում առավելագույնս հաշվի են առնվել Ղազախստանի շահերը՝ նաև արտահանման տեսանկյունից, և այն խոշոր ապրանքախմբերը, որոնք ներկայումս Ղազախստանից արտահանվում են Իրան, հիմնական համաձայնագրով մուտք կգործեն իրանական շուկա՝ զրոյական մաքսատուրքով: Բացի այդ, համաձայնագիրը հնարավորություն կընձեռի որոշակիորեն վերականգնելու ղազախական երկաթյա և պողպատյա ապրանքների ընդհատված արտահանումը դեպի Իրան:

ԵԱՏՄ-ի և Իրանի միջև ազատ առևտրի շուրջ բանակցություններ սկսել էին դեռևս տնտեսական միության ձևավորման վաղ տարիներին, սակայն Ազատ առևտրի ժամանակավոր համաձայնագի-

որը ստորագրվեց միայն 2018 թ., որը 3 տարի ժամկետով ուժի մեջ մտավ 2019 թվականի վերջին: Այս ժամանակավոր համաձայնագրով իրանական կողմը նվազեցրել կամ ընդհանրապես զրոյացրել է 360 ապրանքի (տասնանիշ դասակարգմամբ), իսկ ԵԱՏՄ-ն՝ 502 ապրանքի (դարձյալ տասնանիշ դասակարգմամբ) մաքսատուրքերը[1]: 2022 թ., երբ լրացավ համաձայնագրի ժամկետը, միջանկյալ համաձայնագրի ստորագրմամբ նախատեսվեց դա երկարաձգել ևս 3 տարով կամ մինչև ազատ առևտրի համաձայնագրի ուժի մեջ մտնելը[2]: Եվ, վերջապես, Ազատ առևտրի համաձայնագիրը (այսուհետ՝ ԱԱՀ) ստորագրվեց 2023 թվականին: Վերջինս ուժի մեջ է մտել 2025 թ. մայիսի 15-ին և փոխարինելու է ժամանակավոր համաձայնագրին: Այս համաձայնագրով նախատեսվում է, որ բացառությամբ հավելվածում նշված որոշ ապրանքների, մյուս ապրանքների նկատմամբ կգործի 0% մաքսատուրք[3]:

Իրանի տնտեսության փակ բնույթը սահմանափակում է արտաքին մրցակցության հնարավորությունները, ինչը բարդացնում է այդ շուկայում տեղ զբաղեցնելը: Բացի այդ, բարդ մաքսային ընթացակարգերը և ներմուծման խիստ կարգավորումները լրացուցիչ խոչընդոտներ են ստեղծում դեպի Իրան արտահանման համար: Այս համաձայնագրերը կարող են էապես ընդլայնել ԵԱՏՄ երկրների և Իրանի միջև առևտուրը, քանի որ վերջինս, լինելով փակ տնտեսություն և չանդամակցելով Առևտրի համաշխարհային կազմակերպությանը (ԱՀԿ), բոլոր առևտրային գործընկերների հանդեպ կիրառում է բարձր ներմուծման մաքսատուրքեր, որոնք, այս համաձայնագրերի շնորհիվ, էապես կրճատվում կամ զրոյանում են: Արդեն իսկ ժամանակավոր ԱԱՀ ուժի մեջ մտնելուց հետո զգալիորեն մեծացել է երկրների միջև առևտրաշրջանառությունը, ուստի այս հոդվածաշարով նպատակ ենք դրել ուսումնասիրելու այս համաձայնագրերի ազդեցությունը Իրանի հետ ԵԱՏՄ երկրներից յուրաքանչյուրի առևտրի կառուցվածքի և շարժընթացի վրա: Հոդվածաշարի առաջին հոդվածում անդրադարձել ենք Հայաստան-Իրան առևտրին, այս հոդվածում ուսումնասիրվելու է Ղազախստան-Իրան առևտուրը՝ համաձայնագրերից առաջ և հետո:

Գծապատկեր 1-ում կարելի է տեսնել, որ դիտարկվող գրեթե ողջ ժամանակահատվածում Ղազախստանի արտահա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Ղազախստանից Իրան արտահանումը և ներմուծումը, մլն ԱՄՆ դոլար[4]

[1] Interim Agreement leading to formation of a free trade area between the Eurasian Economic Union and its Member States, of the one part, and the Islamic Republic of Iran, of the other part, https://eec.eaeunion.org/upload/medialibrary/7bc/Interim-Agreement-EAEU_Iran_final.pdf

[2] Eurasian economic commission https://eec.eaeunion.org/en/comission/department/dotp/torgovye-soglasheniya/iran.php

[3] Free Trade Agreement between the Eurasian Economic Union and its Member States, of the one part, and the Islamic Republic of Iran, of the other part, https://eec.eaeunion.org/upload/medialibrary/77b/FTA-EAEU_Iran.pdf

[4] Կազմել է հեղինակը՝ UN Comtrade տվյալների հիման վրա, https://comtradeplus.un.org/

նումն Իրան գերազանցել է ներմուծումը, սակայն 2023 թ. պատկերը փոխվել է հակառակ ուղղությամբ՝ ներմուծումն է գերազանցել արտահանմանը: Մինչ ժամանակավոր ԱԱՀ ուժի մեջ մտնելը՝ Իրանից ներմուծումը չէր հատում անգամ 100 մլն ԱՄՆ դոլարի սահմանը, մինչդեռ դրան հաջորդող առաջին տարում՝ 2020 թ., երբ, համավարակով պայմանավորված, էապես կրճատվեց համաշխարհային առևտուրը, Իրանից ներմուծումն աճեց՝ հատելով 100 մլն դոլարի սահմանը, որը 2023 թ. ավելի քան կրկնապատկվեց՝ արդյունքում առաջին անգամ հանգեցնելով Իրանի հետ բացասական առևտրային հաշվեկշռի: Ակնհայտ է, որ ժամանակավոր ԱԱՀ ուժի մեջ մտնելուց հետո Իրանի արտահանումը դեպի Ղազախստան ցուցաբերել է շեշտակի դրական շարժընթաց, մինչդեռ Ղազախստանից Իրան արտահանումը որոշակիորեն այլ պատկեր է ունեցել: 2014-2020 թթ. Ղազախստանի ընդհանուր արտահանումը, այդ թվում նաև դեպի Իրան, ունի նվազման միտում: Ընդհանուր արտահանման կրճատման պատճառ են դարձել նավթի համաշխարհային գների անկումը, գլխավոր առևտրային գործընկերոջ՝ ՌԴ-ի նկատմամբ կիրառվող պատժամիջոցների և 2020 թ. համավարակի ազդեցությունը: Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ մինչև 2020 թ.-ը դեպի Իրան արտահանման անկումը հիմնականում համընկել է ընդհանուր արտահանման անկման հետ, 2021-2022 թթ. աճը ևս համընկնկել է ընդհանուր արտահանման աճի հետ, իսկ 2023 թ.՝ ընդհանուր արտահանման աճի խորապատկերում, դեպի Իրան արտահանումը չափազանց կրճատվել է: Կրճատման պատճառների և առհասարակ համաձայնագրի ազդեցության վերաբերյալ խորքային պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել երկու երկրների փոխադարձ առևտրի կառուցվածքի շարժընթացը:

Գծապատկեր 2-ից կարելի է նկատել, որ Ղազախստանից Իրան արտահանումն այնքան էլ դիվերսիֆիկացված չէ՝ ոչ ժամանակավոր ԱԱՀ ուժի մեջ մտնելուց առաջ, ոչ էլ հետո: Ընդ որում, եթե մինչև 2017 թ.՝ գերակշռում էր 2 ապրանքախումբ՝ սև մետաղներ և հացահատիկներ, ապա 2017-ից հետո, երբ Իրանը, բացի գործող մաքսատուրքերից, ներքին արտադրողներին պաշտպանելու համար որոշեց սահմանել նորերը՝ պողպատի ներմուծման համար (25 ԱՄՆ դոլար՝ 1 մետրիկ տոննայի համար[5]), Ղազախստանից Իրան արտահանման 90%-ը և ավելին (2019-2022 թթ.) կազմեց ընդամենը մեկ ապրանքախումբ՝ հացահատիկները: Իսկ հացահատիկային մշակաբույսերի բերքատվությունը, կախված եղանակային պայմաններից, ամեն տարի կարող է տարբեր լինել և, օրինակ, երաշտի դեպքում չափազանց նվազել, ինչպես տեղի է ունեցել 2023 թ.[6]: Կրճատման մյուս պատճառը 2023 թ. Ռուսաստանի առաջարկած ավելի մրցունակ գինն էր[7] և Ռուսաստանից Իրան հացահատիկի արտահանման վերաուղղորդումն Աստրախանի (Ռուսաստան) նավահանգստի միջոցով (նախկինում այս նպատակով օգտագործվում էր Ղազախստանի Ակտաու նավահանգիստը)[8]: Արդյունքում իրանական շուկայում ղազախական հացահատիկային մշակաբույսերը փոխարինվեցին ռուսականով, որով էլ պայմանավորված՝ Ղազախստանի արտահանումը դեպի Իրան 2023 թ. գրանցեց ամենացածր մակարդակը:

Պարզելու համար, թե ինչու ժամանակավոր ԱԱՀ ուժի մեջ մտնելը չուղեկցվեց Ղազախստանից Իրան արտահանման աճով, անհրաժեշտ է ուսումնասիրել՝ ինչքանով են ժամանակավոր ԱԱՀ-ում ընդգրկված նվազեցված կամ զրոյական մաքսատուրքով ապրանքները համընկնում

[5] S&P Global, Iran to impose new duty on steel imports from September: report, https://www.spglobal.com/commodityinsights/ko/market-insights/latest-news/metals/011317-iran-to-impose-new-duty-on-steel-imports-from-september-report

[6] US Department of Agriculture, Foreign Agricultural Services, Grain and Feed Update, https://apps.fas.usda.gov/newgainapi/api/Report/DownloadReportByFileName?fileName=Grain%20and%20Feed%20Update_Astana%28Nur-Sultan%29_Kazakhstan%20-%20Republic%20of_KZ2024-0011.pdf

[7] CW Group consulting, Cheap Russian grain replaces Kazakh grain in the Iranian market, https://cwgrp.com/bulkweeknew/news/markets-trade/cheap-russian-grain-replaces-kazakh-grain-in-the-iranian-market?utm_source=chatgpt.com

[8] Kursiv.Media, Kazakhstan's grain trade faces pressure from Russian competition, https://kz.kursiv.media/en/2024-12-05/en-gk-yeri-kazakhstans-grain-trade-faces-pressure-from-russian-competition/?utm_source=chatgpt.com



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Ղազախստանից Իրան արտահանման թոփ 5 ապրանքախմբերն ըստ HS երկնիշ դասակարգման, մլն ԱՄՆ դոլար[9]

72-սև մետաղներ, 10-հացահատիկներ, 82-գործիքներ, դանակներ, գդալներ, պատառաքաղներ ոչ թանկարժեք մետաղներից, 27-հանքային վառելանյութեր, նավթ և նավթամթերք, բիտումային միջոցներ, մոմանյութեր, 23-սննդարդյունաբերության մնացորդներ, պատրաստի անասնակեր, 12-ձիթապտղի սերմեր և պտուղներ, դեղաբույսեր և տեխնիկական բույսեր, ծղոտ, 28-անօրգանական քիմիական միացություններ, ռադիոակտիվ էլեմենտներ և իզոտոպներ, 31-պարարտանյութեր, 07-բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ և ելապտուղներ, 02-միս և մսից ենթամթերք, 15-կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր, սննդային ճարպեր, մեղրամոմ, 87-վերգետնյա տրանսպորտային միջոցներ, բացի երկաթուղային կամ տրամվայի շարժակազմը, դրանց մասեր և սարքավորումներ

Ղազախստանից Իրան արտահանման հետ: Այսպես, ըստ 2022-2023 թթ. HS 6-նիշ դասակարգման, Ղազախստանից Իրան արտահանման թոփ 5 ապրանքախմբից (միասին կազմում են ողջ արտահանման 99%-ը) միայն 2-ի դեպքում է, որ ժամանակավոր ԱԱՀ-ով գործում է նվազեցված մաքսատուրք (աղյուսակ 1), որոնք միասին 2022 թ.կազմել են դեպի Իրան արտահանման 1.5%-ը, 2023 թ.՝ 9%-ը: Ուշագրավ է, որ ավանդաբար դեպի Իրան արտահանման խոշոր ապրանքախմբերը՝ գարին, ցորենը և մեսլին, ժամանակավոր ԱԱՀ-ում ընդգրկված չեն, և դրանց հանդեպ դեռևս կիրառվում է ազգերի առավել բարենպաստության (ԱԱԲ) սկզբունքով գործող մաքսատուրքը: Միաժամանակ, 2023 թ. կնքված և արդեն իսկ ուժի մեջ մտած ԱԱՀ-ն որոշակի քվոտայի շրջանակներում հնարավորություն է տալիս, որ ղազախական ցորենը, գարին և մեսլին զրոյական մաքսատուրքով մուտք գործեն իրանական շուկա, որտեղ, սակայն, պետք է մրցակցեն ռուսական նույնանուն ապրանքների հետ: Ըստ վերջերս ուժի մեջ մտած ԱԱՀ-ի՝ իրանական կողմը ԵԱՏՄ երկրներին զրոյական մաքսատուրքով 3 մլն տոննա քվոտայի շրջանակում փափուկ ցորենի և մեսլինի ներմուծման հնարավորություն է տվել: 2022 թ. Իրանի ողջ ներմուծումը նշված ապրանքախմբի գծով կազմել է 5.3 մլն տոննա: Եթե սա համարենք այս ապրանքախմբի ներմուծման պահանջարկը, ապա հիմնական ԱԱՀ-ով տրված քվոտան կկազմի ներմուծման պահանջարկի 56%-ը: Այնուամենայնիվ, մինչ հիմնական ԱԱՀ ստորագրումը՝ 2022 թ. Ռուսաստանից և Ղազախստանից փափուկ ցորենի և մեսլինի ներմուծումը չէր հասնում 2 մլն տոննայի, ուստի անգամ այս քվոտայի սահմաններում նշված ապրանքախմբի գծով դեպի Իրան արտահանման էական հնարավորություններ են ստեղծվում: Նույնն է նաև գարու դեպքում՝ մինչև 1.5 մլն տոննա՝ 0% մաքսատուրքով, որից ավելիի դեպքում 5-10% մաքսատուրք է կիրառվում՝ կախված եղանակից: Արևածաղկի ձեթի պարագայում ևս քվոտա է սահմանվում՝ տարեկան 500 հազար տոննա՝ 0% մաքսատուրքով, որից հետո կի-

[9] Կազմել է հեղինակը՝ UN Comtrade տվյալների հիման վրա, https://comtradeplus.un.org/

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Ղազախստանից Իրան արտահանման թոփ 5 ապրանքախմբերը և առևտրային ռեժիմների մաքսային դրույքաչափերը, 2022-2023 թթ.[10]

HS կոդ	Ապրանքախմբի անվանումը	Արտահանում մլն ԱՄՆ դոլար	ԱԱԲ	Ժամանակավոր ԱԱՀ	ԱԱՀ
		2022			
100199	Փափուկ ցորեն և մեսլին	175.2	10%	10%	0%, քվոտավորված
100390	Գարի	1163	5%	5%	0%, քվոտավորված
100191	Փափուկ ցորեն և մեսլին սերմնացու	10	5%	5%	0%
151211	Արևածաղկի ձեթ	3.3	20%	10%	0%, քվոտավորված
230630	Քուսպ և բուսական յուղի մշակման այլ մնացորդ	1.4	10%	7.5%	0%
		2023			
100390	Գարի	43.7	5%	5%	0%, քվոտավորված
100199	Փափուկ ցորեն և մեսլին	17.7	10%	10%	0%, քվոտավորված
230630	Քուսպ և բուսական յուղի մշակման այլ մնացորդ	8	10%	7.5%	0%
120590	Կանեփակի (հլածուկի) սերմ	5.2	10%	10%	0%
020110	Տավարի թարմ կամ պաղեցրած միս	2.2	26%	10%	0%

բառվելու է 10% մաքսատուրք: Այնուամենայնիվ, այս ապրանքախմբի ներմուծման ողջ ծավալը 2022 թ. էականորեն պակաս է եղել նշված քվոտայից, ինչը նշանակում է, որ այս ուղղությամբ ևս արտահանման հնարավորությունները մեծանում են:

Բացի վերոնշյալ ապրանքներից, հիմնական ԱԱՀ շրջանակում հնարավորություն կստեղծվի որոշակիորեն վերականգնելու ղազախական երկաթի և պողպատի արտահանումը Իրան, որոնք ժամանակավոր ԱԱՀ-ում ընդգրկված չէին:

Գծապատկեր 3-ից կարելի է նկատել, որ, ի տարբերություն դեպի Իրան արտահանման, Իրանից ներմուծումն ավելի դիվերսիֆիկացված է: Թե՛ ժամանակավոր ԱԱՀ-ից առաջ, թե՛ դրանից հետո Իրանը կարողացել է ավելի բազմազանեցված ապրանքախմբերով ներկայանալ ղազախական շուկայում, թեև ծավալով մինչև 2023 թ. միշտ զիջել է Ղազախստանից Իրան արտահանմանը: Գծապատկեր 3-ում կարելի է նկատել նաև, որ ժամանակավոր ԱԱՀ ուժի մեջ մտնելուց հետո էականորեն ավելացել է 08 (ուտելի պտուղներ (մրգեր) և ընկույզներ, ցիտրուսային կամ բոստանային մշակաբույսերի կեղևներ և կճեպներ), 39 (պոլիմերային նյութեր, պլաստմասսաներ և պատրաստի իրեր դրանցից), 07 (բանջարեղեն և ուտելի որոշ արմատապտուղներ և պալարապտուղներ), 69 (կերամիկական արտադրանք), 04 (կաթնամթերք, թռչունների ձվեր, մեղր բնական, կենդանական ծագում ունեցող սննդամթերք՝ այլ տեղում չնշված) ապրանքախմբերի ներմուծումը:

Աղյուսակ 2-ից պարզ է դառնում, որ ժամանակավոր ԱԱՀ-ով զրոյացել է Իրանից Ղազախստան ներմուծման 10 խոշոր ապրանքախմբերից միայն մեկի՝ «Ուտելի մրգեր, թարմ կամ չորացրած արմավ» ապրանքախմբի մաքսատուրքը (Իրանից

[10] Կազմել է հեղինակը՝ UN Comtrade, ԵԱՏՄ-Իրան ժամանակավոր ազատ առևտրի համաձայնագրի, ԵԱՏՄ-Իրան ազատ առևտրի համաձայնագրի և Taxprice foundation տվյալների հիման վրա, https://taxprice.org/hs-customs-tarif/iran/26030010/



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Իրանից Ղազախստան ներմուծման թոփ 10 ապրանքախմբերն ըստ HS երկնիշ դասակարգման, մլն ԱՄՆ դոլար[11]

25-աղ, ծծումբ, հողեր և քարեր, սվաղային նյութեր, կիր և ցեմենտ, 08-ուտելի պտուղներ (մրգեր) և ընկույզներ, ցիտրուսային կամ բոստանային մշակաբույսերի կեղևներ և կճեպներ, 70-ապակի և ապակուց պատրաստված արտադրանք, 39-պոլիմերային նյութեր, պլաստմասսաներ և պատրաստի իրեր դրանցից, 34-օճառ, լվացող միջոցներ, քսանյութեր, արհեստական և պատրաստի մոմեր, 32-դաբաղման կամ ներկող խտանյութեր, ներկանյութեր, գունանյութեր և այլ ներկող նյութեր, ներկեր և լաքեր, թանաք, 68-արտադրատեսակներ քարից, գիպսից, ցեմենտից, ասբեստից, փայլարից և համանման նյութերից, 07-բանջարեղեն և ուտելի որոշ արմատապտուղներ և պալարապտուղներ, 84-միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական հարմարանքներ, դրանց մասեր, 73-արտադրատեսակներ սև մետաղներից, 69-կերամիկական արտադրանք, 04-կաթամթերք, թռչունների ձվեր, մեղր բնական, կենդանական ծագում ունեցող սննդամթերք՝ այլ տեղում չնշված, 29-օրգանական քիմիական միացություններ, 15-կենդանական կամ բուսական ծագում ունեցող ճարպեր և յուղեր, դրանց քայքայումից ստացված մթերք, պատրաստի սննդային ճարպեր, կենդանական կամ բուսական ծագում ունեցող մոմեր, 20-մթերքներ՝ ստացված բանջարեղենի, պտուղների (մրգերի) ընկուզեղենի կամ բույսերի այլ մասերի վերամշակումից

Ղազախստան ներմուծման 2-րդ խոշոր ապրանքախումբն է) և կրկնակի կրճատվել չլաքապատված կավե սալիկների մաքսատուրքը, որն էլ 3-րդ խոշոր ապրանքախումբն է, ինչպես նաև 25-50%-ով կրճատվել է «Վարունգներ և մանրավարունգներ՝ թարմ կամ պաղեցված» ապրանքախմբի մաքսատուրքը: Միաժամանակ, հիմնական ԱԱՀ-ով կզրոյացվեն ներկայիս 10 խոշոր ապրանքախմբերից 7-ի մաքսատուրքերը (միայն 070700 ապրանքախմբի համար 0% մաքասատուրք գործում է մինչև 43 հազար տոննայի համար, որից հետո կիրառվելու է 5-11.3% մաքասատուրք), որոնց մեջ, սակայն, չեն մտնում «Էթիլենային պոլիմերները», որոնք Իրանից Ղազախստան ներմուծման ամենամեծ ապրանքախումբն են: Տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ Ղազախստանն այս ապրանքախմբի խոշոր ներմուծողներից է, սակայն ներմուծման կեսից ավելին բաժին է ընկնում ՌԴ-ին: Վերջինս այս ապրանքախմբի խոշոր արտահանողներից է, ինչպես և Իրանը, ինչն էլ, ՌԴ շահերը պաշտպանելու տեսանկյունից, տրամաբանական է դարձնում ԵԱՏՄ-ի կողմից այս ապրանքախմբի նկատմամբ արտոնյալ ռեժիմի բացառումը թե՛ ժամանակավոր, թե՛ հիմնական ԱԱՀ-ում: Այսպիսով՝ ժամանակավոր ԱԱՀ-ով ոչ միայն կրճատվել կամ զրոյացվել են դեպի Ղազախստան իրանական ծագման որոշ ավանդական, այլև այնպիսի ապրանքների ներմուծման մաքսատուրքերը, որոնք նախկինում կա՛մ Իրանից չէին ներմուծվում, կա՛մ ներմուծման ծավալներն աննշան էին (օրինակ՝ երեսպատման չլաքապատված սալիկներ): Հիմնական ԱԱՀ-ն ևս կավելացնի իրանական ապրանքների՝ ղազախական շուկայում ընդլայնման հնարավորությունները:

Ամփոփելով կարող ենք նշել, որ ժամանակավոր ԱԱՀ-ն Ղազախստանից Իրան

[11] Կազմել է հեղինակը՝ UN Comtrade տվյալների հիման վրա, https://comtradeplus.un.org/

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Իրանից Ղազախստան ներմուծման թոփ 10 ապրանքախմբերը և առևտրային ռեժիմների մաքսային դրույքաչափերը, 2023 թ.[12]

HS կոդ	Ապրանքախմբի անվանում	Ներմուծում, մլն ԱՄՆ դոլար	ԱԱԲ	Ժամանակավոր ԱԱՀ	ԱԱՀ
390120	Էթիլենային պոլիմերներ, սկզբնական ձևերով՝ 0,94 և ավելի տեսակարար կշիռ ունեցող պոլիէթիլեն	26.9	6	6	6
080410	Ուտելի մրգեր, արմավ թարմ կամ չորացրած	11.7	5	0	0
690723	Հատակի և պատի երեսպատման չլաքապատված կավե սալիկ	8.6	12	6	0
390110	Էթիլենային պոլիմերներ, սկզբնական ձևերով՝ 0,94-ից պակաս տեսակարար կշիռ ունեցող պոլիէթիլեն	7.8	6	6	6
390319	Ստիրոլի պոլիմերներ՝ սկզբնական ձևերով	7.3	0	0	0
151790	Մարգարին, սննդի մեջ օգտագործելու համար պիտանի խառնուրդներ կամ պատրաստի մթերքներ՝ կենդանական կամ բուսական ճարպերից կամ յուղերից	6.8	15	15	0
070700	Վարունգներ և մանրավարունգներ՝ թարմ կամ պաղեցրած (քվոտավորված)	5.9	10-15	5- 11.3	0%, քվոտա վորվա
252329	Պորտլանդցեմենտ	5.6	3	3	0
290531	Ացիկլիկ, դիոլներ, էթիլեն գլիկոլ (էթանեդիոլ)	5.0	5	5	5
340250	Լվացող և մաքրող միջոցներ, փոշիներ, օճառ պարունակող և չպարունակող այլ նյութեր	4.7	6.5	6.5	0

արտահանման վրա չի ունեցել էական ազդեցություն, քանի որ Ղազախստանից Իրան արտահանումը ոչ դիվերսիֆիկացված է, իսկ հիմնական արտահանվող ապրանքախմբերի վրա արտոնյալ մաքսատուրք ժամանակավոր ԱԱՀ-ով նախատեսված չէ: Միաժամանակ, Իրանն ունենալով ավելի դիվերսիֆիկացված արտահանում դեպի Ղազախստան, կարողացել է առավելագույնս օգտվել ժամանակավոր ԱԱՀ շրջանակներում գործող արտոնյալ մաքսատուրքերից, որի հետևանքով մինչ հիմնական ԱԱՀ ուժի մեջ մտնելը հնարավոր է՝ պահպանվի 2023 թվականից սկիզբ առած Ղազախստան-Իրան բացասական առևտրային հաշվեկշիռը՝ հօգուտ Իրանի: Թեև Ղազախստանի արտահանումը դեպի Իրան չի աճել, փոխարենը՝ մեծացել է ներմուծումը, ինչը կարող է բացասաբար ընկալվել առևտրային հաշվեկշռի տեսանկյունից: Սակայն, բնակչության բարեկեցության առումով, ավելի էժան ներմուծումը կարող է նպաստել ներքին շուկայում ապրանքների մատչելիությանը՝ դրական ազդեցություն ունենալով սպառողների վրա: Այնուամենայնիվ, հիմնական ԱԱՀ-ում ամբողջովին հաշվի են առնվել Ղազախստանի շահերը՝ նաև արտահանման տեսանկյունից, և դրա ուժի մեջ մտնելուց հետո ոչ միայն ներկայիս բոլոր խոշոր ապրանքախմբերը զրոյական մաքսատուրքով մուտք կգործեն իրանական շուկա, այլև որոշակիորեն հնարավոր կլինի վերականգնել ղազախական երկաթյա և պողպատյա ապրանքների արտահանումն Իրան:

[12] Կազմել է հեղինակը՝ UN Comtrade, ԵԱՏՄ-Իրան ժամանակավոր ազատ առևտրի համաձայնագրի, ԵԱՏՄ-Իրան Ազատ առևտրի համաձայնագրի և Taxprice foundation տվյալների հիման վրա, https://taxprice.org/hs-customs-tarif/iran/26030010/

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. CW Group consulting, Cheap Russian grain replaces Kazakh grain in the Iranian market, https://cwgrp.com/bulkweeknew/news/markets-trade/cheap-russian-grain-replaces-kazakh-grain-in-the-iranian-market?utm_source=chatgpt.com
2. Eurasian economic commission https://eec.eaeunion.org/en/comission/department/dotp/torgovye-soglasheniya/iran.php
3. Free Trade Agreement between the Eurasian Economic Union and its Member States, of the one part, and the Islamic Republic of Iran, of the other part, https://eec.eaeunion.org/upload/medialibrary/77b/FTA-EAEU_Iran.pdf
4. Interim Agreement leading to formation of a free trade area between the Eurasian Economic Union and its Member States, of the one part, and the Islamic Republic of Iran, of the other part, https://eec.eaeunion.org/upload/medialibrary/7bc/Interim-Agreement-EAEU_Iran_final.pdf
5. Kursiv.Media, Kazakhstan's grain trade faces pressure from Russian competition, https://kz.kursiv.media/en/2024-12-05/engk-yeri-kazakhstans-grain-trade-faces-pressure-from-russian-competition/?utm_source=chatgpt.com
6. S&P Global, Iran to impose new duty on steel imports from September: report, https://www.spglobal.com/commodityinsights/ko/market-insights/latest-news/metals/011317-iran-to-impose-new-duty-on-steel-imports-from-september-report
7. Taxprice foundation, https://taxprice.org/hs-customs-tarif/iran/26030010/
8. UN Comtrade, https://comtradeplus.un.org/
9. US Department of Agriculture, Foreign Agricultural Services, Grain and Feed Update, https://apps.fas.usda.gov/newgainapi/api/Report/DownloadReportByFileName?fileName=Grain%20and%20Feed%20Update_Astana%28Nur-Sultan%29_Kazakhstan%20-%20Republic%20of_KZ2024-0011.pdf

Рузанна ТАДЕВОСЯН

Эксперт-научный сотрудник исследовательского центра «Амберд, АГЭУ

кандидат экономических наук

АРМЕНИЯ И МИР

Торговля между Казахстаном и Ираном в контексте соглашений о свободной торговле между Ираном и ЕАЭС

В статье исследуется торговля между Казахстаном и Ираном до и после вступления в силу временного соглашения о свободной торговле между ЕАЭС и Ираном, а также обсуждаются возможные изменения после вступления в силу основного соглашения о свободной торговле (ССТ). Анализ показал, что от временного ССТ в большей степени выигрывает Иран, чем Казахстан, так как у последнего менее диверсифицированный экспорт в двусторонней торговле, а на большинство экспортируемых товаров не распространяются льготные таможенные пошлины.

В результате в 2023 году Казахстан впервые имел отрицательное сальдо торгового баланса с Ираном, и оно, возможно, сохранится до вступления в силу основного ССТ. Тем не менее, в основном соглашении в полной мере учтены интересы Казахстана и с точки зрения экспорта. Крупнейшие группы товаров, которые в настоящее время экспортируются из Казахстана в Иран, по основному соглашению получат доступ на иранский рынок с нулевой таможенной пошлиной. Кроме того, соглашение позволит частично восстановить прерванный экспорт казахстанских изделий из железа и стали в Иран.

Ключевые слова: *Соглашение о свободной торговле, ЕАЭС, Казахстан, Иран, экспорт, импорт*

Ruzanna TADEVOSYAN
Expert-scientific researcher at «Amberd» Research Center, ASUE,
PhD in Economics

ARMENIA AND THE WORLD

Kazakhstan-Iran Trade in the Context of Iran-EAEU Free Trade Agreements

The article examines Kazakhstan-Iran trade before and after the entry into force of the temporary free trade agreement between the EAEU and Iran, as well as the potential changes following the implementation of the main free trade agreement (FTA). The analysis shows that Iran benefits more from the temporary FTA than Kazakhstan, as Kazakhstan has a less diversified export structure in bilateral trade, and preferential tariffs do not apply to most of its exported goods.

As a result, in 2023, Kazakhstan had a negative trade balance with Iran for the first time, which may persist until the main FTA comes into effect. However, the main agreement has taken Kazakhstan's interests into account, particularly regarding exports. The major product groups currently exported from Kazakhstan to Iran will enter the Iranian market with zero tariffs under the main agreement. Additionally, the agreement will provide an opportunity to partially restore the interrupted export of Kazakh iron and steel products to Iran.

Keywords: *Free trade agreement, EAEU, Kazakhstan, Iran, export, import.*